**Ծառայության մատուցման հայտարարություն**

**Պաշտոն**՝ Քաղաքային կայուն կանաչապատման մոդելի լավագույն փորձի ուսումնասիրության փորձագետ (հիմնական ոլորտները՝ քաղաքային կանաչապատում, վերականգնվող էներգետիկա (ՎԷ) եւ էներգաարդյունավետություն (ԷԱ), կենցաղային թափոնների կայուն կառավարում):

**Կազմակերպություն**՝ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ

**Աշխատանքի վայր՝** ՀՀ՝ այցեր Երեւան, Լոռու, Տավուշի եւ Շիրակի մարզեր

**Դիմելու վերջնաժամկետ**՝ 17-ը մայիսի, 2021 թ.

**Աշխատանքի տեւողություն**՝ 40 օր հետեւյալ ժամանակահատվածում՝ մայիս, 2021 թ. – հոկտեմբեր, 2021 թ. եւ փետրվար, 2022թ.:

**Աշխատանքի ակնկալվող մեկնարկ**՝ 20-ը մայիսի, 2021 թ.

**Նկարագրություն**՝ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը՝ համագործակցելով «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի եւ «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի հետ, ԵՄ ֆինանսավորմամբ 2021թ մարտի 1-ից մեկնարկել է «EU4ENVIRONMENT. ԿԱՆԱՉ ՀԱՄԱՅՆՔ՝ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱ» ծրագիրը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է 3 փորձագետներից բաղկացած աշխատանքային խմբի միջոցով՝

- **իրականացնել միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն քաղաքային կանաչապատման, վերականգնվող էներգետիկա (ՎԷ) եւ էներգաարդյունավետություն (ԷԱ), կենցաղային թափոնների կայուն կառավարման բնագավառներում**
- մշակել նշված ոլորտների բարելավմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթ
- գործընկեր շահագրգիռ կողմերի հետ իրականացնել համապատասխան խորհրդակցություններ՝ ազգային ծրագրերի ու նախագծերի ուսումնասիրության, դասակարգման արդյունքում դրանց միջեւ փոխլրացում ապահովելու նպատակով:

***Աշխատանքային խմբի ուսումնասիրության վերջնական նպատակն է նպաստել թիրախային համայնքներում՝***

1) Տնկիների մատակարարման եւ կենսունակության ապահովմանն ուղղված ենթակառուցվածքների ստեղծմանը
2) Կանաչ եւ կայուն քաղաքաշինության զարգացմանը՝ ֆունկցիոնալ եւ լիազորված օրենսդրական/ կարգավորող դաշտի ձեւավորման միջոցով:

**Աշխատանքային խմբից ակնկալվող արդյունքներ՝**

1) Ուսումնասիրության զեկույցի մեջ ամփոփված կլինեն՝
- **Քաղաքային տարածքների կայուն եւ կանաչ զարգացման ոլորտում միջազգային լավագույն փորձը**
- Իրավական/ կարգավորող շրջանակը
- Կառավարության եւ դոնորների աջակցությամբ իրականացվող ընթացիկ/պլանավորած նախաձեռնությունների փոխլրացումն ապահովող առաջադրված մեխանիզմները
2) Օրենքների եւ կանոնակարգերի նախագծերի փաթեթ

Վերոնշյալ կետերի իրականացման համար անհրաժեշտ է կատարել **միջազգային լավագույն փորձի** եւ **ազգային մակարդակում** կարողությունների/պայմանների համապարփակ եւ համեմատական ուսումնասիրություններ, իսկ ավելի հստակ՝ միջազգային փորձի ուսումնասիրություն իրականացնող փորձագետը պետք է իրականացնի **քաղաքային համայնքների կանաչ զանգվածների կայուն աճն ապահովելու նպատակով միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում, համապատասխան մոդելների բացահայտում եւ դրանց ներդրման եղանակների առաջադրում:**

Նշված գործողությունները կիրականացվեն աշխատանքային խմբի ներսում սերտ համագործակցության պայմաններում:

**Փորձագետի հիմնական պարտականությունն է՝**

- Ապահովել վերը նշված արդյունքներից **Քաղաքային տարածքների կայուն եւ կանաչ զարգացման ոլորտում միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության իրականացումը**
- Տրամադրել համապատասխան խորհրդատվություն վերը նշված աշխատանքային խմբին եւ ծրագրային թիմին ու փորձագետներին
- Պահպանել ծրագրում ներգրավված այլ փորձագիտների տրամադրած խորհրդատվության ամբողջական գրառումները
- Անցկացնել ծրագրի նպատակներին համապատասխանության պարբերական քննարկումներ աշխատանքային խմբի ներսում եւ Ծրագրի անձնակազմի հետ
- Փաստաթղթավորել քաղված դասերը եւ լավագույն գործելակերպը, աշխատանքի արդյունքում քաղված դասերով կիսվել թիմի հետ:

**Պահանջվող որակավորումները՝**

- Բարձրագույն կրթություն հասարակական գիտությունների, բնական գիտությունների կամ հարակից ոլորտներում
- Ծրագրերի (մասնավորապես՝ ԵՄ կամ միջազգային այլ դրամաշնորհային ծրագրեր) շրջանակում առանձին կամ աշխատանքային խմբի մեջ միջազգային փորձի ուսումնասիրության եւ համապատասխան զեկույցների ներկայացման առնվազն 5 տարվա փորձ
- Ստացված տվյալների որակի եւ ամբողջականության ապահովման, ինչպես նաեւ աշխատանքային խմբում հետազոտության կառավարման փորձ
- Թիմային աշխատանքի փորձ
- Անգլերենի եւ հայերենի գերազանց իմացություն:

**Վարձատրություն՝** Ըստ աշխատանքային գործունեության պատմության, բայց ոչ ավելի, քան նախատեսված է ծրագրի բյուջեով:

**Ծրագրի մասին՝**

**Ծրագրի ընդհանուր նպատակն է** Հայաստանի մարզային փոքր եւ մեծ քաղաքների կարողությունների հզորացումը՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության եւ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

**Ծրագրի հատուկ նպատակներն են՝**

- Հայաստանի շահառու համայքներում «կանաչ» քաղաքաշինության պրակտիկայի ընդլայնում
- Շահառու համայքներում «կանաչ» կենսակերպի խթանում

**Ծրագրի թիրախային համայնքներն են՝**

- Շիրակի մարզ՝ Գյումրի, Արթիկ, Մարալիկ
- Լոռու մարզ՝ Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր, Ախթալա, Թումանյան
- Տավուշի մարզ՝ Իջեւան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան, Այրում

**Ուսումնասիրության իրականացման մեթոդոլոգիան**

Լավագույն փորձի ուսումնասիրության զեկույցի գնահատման չափորոշիչներն են՝

- Հստակություն. համոզվել, որ յուրաքանչյուր հարցի ձեւակերպումը հստակ է եւ ներառում է բոլոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են ծրագրի թիմին՝ յուրաքանչյուր գաղափարի հետեւողական գնահատման համար:

- Ծրագրին համապատասխանությունը. հանգամանալից հաշվի առնել նախագծի նպատակները եւ դրանք կիրառել ուսումնասիրության չափորոշիչների մշակման գործընթացում
- Համակողմանի եւ  հակիրճ. մանրամասների եւ պարզության միջեւ ճիշտ հավասարակշռության ապահովում
- Լավագույն փորձի ուսումնասիրության ընթացքում պետք է նաեւ հաշվի առնել առաջարկվող մոդելների ցանկալիության, իրագործելիության եւ կենսունակության  չափորոշիչները:

**Ինչպե՞ս դիմել՝**

Հետաքրքրված թեկնածուները պետք է իրենց ինքնակենսագրությունը (CV) եւ հետաքրքրության նամակը (պաշտոնին համապատասխանելու հիմնավորմամբ (1 էջի սահմաններում) ներկայացնեն հետեւյալ էլեկտրոնային փոստի հասցեներով. arthur@armeniatree.org եւ anna@armeniatree.org՝ վերնագրում նշելով «EU4ENVIRONMENT: ԿԱՆԱՉ ՀԱՄԱՅՆՔ՝ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱ» **ծրագիր.** «Քաղաքային կայուն կանաչապատման մոդելի լավագույն փորձի ուսումնասիրության փորձագետ»: **Դիմումների վերջնաժամկետը 2021թ. մայիսի 17-ն է:** Ժամկետանց դիմումները չեն ընդունվելու: Հարցազրույցի կհրավիրվեն միայն Ընտրող հանձնաժողովի կողմից ինքնակենսագրականների հիման վրա ընտրված դիմորդները: Առավելություն կտրվի Կայուն քաղաքաշինության ոլորտում ուսումնասիրության փորձ ունեցող փորձագետներին:

Դիմումների հետ կապված հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +374 77 43 61 72 (Աննա Գևորգյան):

**Ժամանակացույց**

| **Գործողություն/<br>գործընթաց** | **Ամսաթիվ** |
|---|---|
| Մրցույթի բացում | Մայիսի 3, 2021թ. |
| Մրցույթին մասնակցող հայտատուների դիմումների քննարկում եւ կոմիտեի որոշում | Մայիսի 18, 2021 թ. |
| Պայմանագրի կնքում | Մինչեւ մայիսի 20, 2021 |

| | |
|---|---|
| Լավագույն փորձի ուսումնասիրության զեկույցի նախագծի ներկայացում (հաշվի առնելով էներգաարդյունավետության եւ էներգախնայողության, եւ քաղաքային կանաչապատման փորձագետների խորհրդատվությունը) | Հունիսի 15, 2021 թ. |
| Հետադարձ կապի հավաքագրում աշխատանքային խմբի եւ վերականգնվող էներգիայի եւ էներգախնայողության, եւ քաղաքային կանաչապատման փորձագետներից ու Ծրագրի անձնակազմից (5-օրյա ժամկետում) եւ ըստ այդմ զեկույցի վերանայում (5-օրյա ժամկետում) | Հունիսի 28, 2021 թ. |
| Աշխատանքային խմբի ամբողջական զեկույցի նախագծի ներկայացում, որում ամփոփված կլինի հետեւյալը՝<br>***<u>Աշխատանքային խմբից ակնկալվող արդյունքներ</u>***<br>3) **Ուսումնասիրության զեկույցի** մեջ ամփոփված կլինեն՝<br>- **Քաղաքային տարածքների կայուն եւ կանաչ զարգացման ոլորտում միջազգային լավագույն փորձը**<br>- Իրավական/ կարգավորող դաշտը<br>- Կառավարության եւ դոնորների աջակցությամբ իրականացվող ընթացիկ/պլանավորած նախաձեռնությունների փոխլարցումն ապահովող առաջադրված մեխանիզմները<br>4) Օրենքների եւ կանոնակարգերի նախագծերի փաթեթ | Հուլիսի 12, 2021 թ. |
| Ամբողջական զեկույցի նախագծի վերաբերյալ հետադարձ կապի հավաքագրում աշխատանքային խմբի եւ վերականգնվող էներգիայի եւ էներգախնայողության եւ քաղաքային կանաչապատման հարցերով փորձագետներից, ինչպես նաեւ Ծրագրի անձնակազմից (5-օրյա ժամկետում) եւ ըստ այդմ զեկույցի վերանայում (5-օրյա ժամկետում) | Հուլիսի 23, 2021 թ. |
| Խորհրդակցություններ եւ թիմային աշխատանք Կարիքների գնահատման եւ Կանաչ/կայուն քաղաքաշինության մոդելը նախագծող փորձագետների հետ | Հուլիսի 19, 2021 թ. - Օգոստոսի 15, 2021 թ. |

| | |
|---|---|
| Դոնորից, գործընկեր կազմակերպություններից եւ խորհրդատվական աշխատանքային հանձնաժողովից ստացված մեկնաբանությունների հիման վրա ուսումնասիրության զեկույցում լրացումների եւ փոփոխությունների ապահովում եւ զեկույցի ներկայացում աշխատանքային խմբի հետ միասին | Օգոստոսի 16, 2021 թ. |
| Անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում առաջարկված մոդելի հիման վրա ուսումնական ձեռնարկ եւ համապատասխան կրթական նյութեր մշակող երկու վերապատրաստող մասնագետներին | Սեպտեմբերի 20, 2021 թ. - Հոկտեմբերի 18, 2021 թ., փետրվար, 2022 թ. |

## Job provision announcement

**Position:** Expert on best practice review of sustainable municipal greening model (focus fields: urban greening, energy efficiency and energy conservation, sustainable management of household waste)

**Organization:** Armenia Tree Project Charitable Foundation

**Post Location (s):** RA: visits to Yerevan, Tavush, Lori and Shirak marzes

**Application deadline:** May 17, 2021

**Employment:** 40 days in the following period: May, 2021 – October, 2021 and February, 2022

**Expected start date:** May 20, 2021

**Description**: The ATP Charitable Foundation, in cooperation with the Jinishian Memorial Foundation and the Armenian Energy Agency Foundation has launched the EU4Environment: "Green community - resilient future" project financed by the EU on March 1, 2021.

Within the framework of the program a working group comprised of 3 experts will be created (one of them is the best practice review expert mentioned in this announcement) to:

1. Review the international best practices in the fields of urban greening, energy efficiency, energy conservation and sustainable management of household waste;
2. Develop a package of legislative drafts aimed at improving these fields;

3. Carry out appropriate consultations with partner stakeholders in order to ensure complementarity between national policies and projects as a result of the study and classification.

**The ultimate goal of the working group's research is to contribute to:**

1. Development of infrastructure for supplying seedlings and ensuring necessary up keeping in the target communities;
2. Sustainable and green development of urban areas by facilitating an empowered and functional legislative/regulatory framework;

**The results expected from the working group:**

1) The study report will summarize:
- **International best practices in the field of sustainable and green development of urban areas;**
- Legal and regulatory framework;
- Proposed mechanisms for ensuring complementarity of ongoing/planned Government and donor supported initiatives;
2) Package of draft laws/regulations.

To make this happen, a comprehensive and comparative review of international best practices and national environment should be carried out, more specifically, the best practice review expert should research international best practices for ensuring sustainable and green development of urban areas; should identify suitable models and should propose project-specific adaptation scenarios.

These actions will be carried out in close cooperation within the working group.

**Main responsibilities:**
- Ensure the study implementation of international best practices in the field of sustainable and green development of urban areas;
- Provide necessary consultations to the above mentioned working group, project implementation team and the experts;
- Keep complete records of all project expert consultations;
- Conduct periodic compliance consultations with the working group and Project implementation team;
- Document the lessons learned and best practices, share it with the wider team;

**Required qualifications:**
- University degree in social sciences, natural sciences or in related fields;
- At least 5 years of experience in researching international practice and submitting relevant reports within the framework of programs separately or in a working group (particularly EU or other international donor projects);
- Ensuring the quality and integrity of the data obtained and the research management;

- Teamwork experience;
- Proficiency in English and Armenian

**Remuneration**. According to the salary history, but not more than budget by the project.

**About the Project**

**Overall objective:** Increased environmental protection and climate change adaptation capacities of Armenia's small regional cities and towns.

**Specific objective(s):**

1. Advanced green urban planning capacities in the beneficiary regions of Armenia;

2. Green lifestyle promoted in target regions.

**Targeted municipalities of the project:**
- **Shirak region** - Gyumri, Artik, Maralik,
- **Lori region** - Vanadzor, Alaverdi, Stepanavan, Spitak, Tashir, Akhtala, Tumanyan,
- **Tavush region** - Ijevan, Dilijan, Berd, Noyemberyan, Ayrum.

**Methodology**

The best practice review criteria include the following:

- Clear – making sure the wording of each question is crystal-clear and includes all the information the Project team would need to score each idea consistently
- Project-specific – thinking carefully about the objectives of the Project and weaving these into the review criteria
- Comprehensive, yet concise – striking the right balance between detail and simplicity
- The best practice review should also include criteria around desirability, feasibility and viability.

**How to apply?** Interested candidates or organizations can submit their CV and Cover letter (within 1 page) to the following email addresses: arthur@armeniatree.org and anna@armeniatree.org, mentioning ""EU4ENVIRONMENT: GREEN COMMUNITY – RESILIENT FUTURE" – Expert on best practice review of sustainable municipal greening model.

**The deadline for applications is May 17, 2021.** Overdue applications will not be accepted. Only the shortlisted applicants will be invited for an interview. Experts with research experience in the field of sustainable urban development will be given an advantage.

For questions related to applications, you can call the phone number- (+374) 77 43 61 72 (Anna Gevorgyan).

**Timetable**

| **Activity/Procedure** | **Date** |
|---|---|
| Open tender | May 3, 2021 |
| Review of proposals from tender applicants and decision of the committee | May 18, 2021 |
| Award of contract | Before May 20, 2021 |
| Submission of best practice study draft report (taking into account the recommendations received energy efficiency and renewable energy and urban greening experts) | June 15, 2021 |
| Collection of feedback from the working group and experts on renewable energy and energy conservation and urban greening and project staff (within 5 days) and review of the report accordingly (within 5 days) | June 28, 2021 |
| Submission of the draft full report of the working group, which will summarize the following:<br>The results expected from the working group.<br>1) The study report will summarize<br>- International best practices in the field of sustainable and green development of urban areas,<br>- Legal and regulatory framework,<br>- Proposed mechanisms for ensuring complementarity of ongoing/planned Government and donor supported initiatives,<br>2) Package of draft laws/regulations. | July 12, 2021 |
| Collection of feedback on the draft full report from the working group and experts as well as project staff (within 5 days) and review the report accordingly (within 5 days) | July 23, 2021 |

| | |
|---|---|
| Consultations and teamwork with experts on needs assessment and sustainable/ green urban development | July 19, 2021- August 15, 2021 |
| Based on comments received from the donor, partner organizations and the advisory working group, ensure additions and changes to the study report and submit the report together with the working group | August 16, 2021 |
| Providing the necessary consultations to two trainers who develop a training manual and related training materials based on the proposed model | September 20, 2021 - October 18, 2021 and February, 2022 |